ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/146

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 07.06.2021թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.06.2021թ. թիվ 26/26-1/8859-2021 գրությամբ «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության 27.05.2021թ. թիվ 01-03/276-2021 գրության հիման վրա 02.06.2021թ. թիվ 26/26-1/8859-2021 գրությամբ նախաձեռնել է «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

- *Գործի հակիրճ նկարագրությունը և գործի փաստերը*

«էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կարիքների համար՝ պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգով պահանջվել են հետևյալ աշխատանքները:

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	ԷՑՎ 12-160-100 պոպմի վերանորոգում
2	ԷՑՎ 12-160-65 պոպմի վերանորոգում
3	ԷՑՎ 12-255-35 պոպմի վերանորոգում

Հրավերին կից հավելվածով՝ ծավալաթերթով, սահմանվել է, որ 1-ին չափաբաժնով պահանջվելու է 4 պոպմի վերանորոգում, 2-րդ չափաբաժնի մասով՝ 8 պոպմի վերանորոգում, 3-րդ չափաբաժնի մասով՝ 7 պոպմի վերանորոգում:

«Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է գնային առաջարկ, որով առաջարկել հետևյալ գները՝

1-ին չափաբաժին՝ 578 643 ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին ՝542 013 ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժին՝472 083 ՀՀ դրամ:

Այսինքն՝ «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն, ինչպես նաև մյուս մասնակիցները, գնային առաջարկը ներկայացրել է միավորի գնով՝ մեկ պոմպի վերանորոգման համար /ինչը նախատեսվել է և Հրավերով, և ինչը պահանջել է գնահատող հանձնաժողովը/:

«Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ի կողմից «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է գնային առաջարկ, որով առաջարկել է պայմանգիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով՝

1-ին չափաբաժին՝ 3 463 200 ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին ՝ 6 491 280 ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժին՝ 5 353 530 ՀՀ դրամ:

Ըն որում, ներկայացված ծավալաթերթի հաշվարկում «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն կատարել է փոփոխություն՝ ի համեմատ հրավերի, և նշել «միավորի գին բազմապատկած պոմպերի քանակի գին հավասար է ընդհանուր գին»:

Հայտերը բացելուց հետո «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն մատնանշել է գնահատող հանձնաժողովին, որ նշված ՍՊԸ-ների կողմից ներկայացվել են միավորի գներ, և նման դեպքում վերոհիշյալ ՍՊԸ-ները պարտավոր են ողջ պայմանագիրը՝ պոմպերի համապատասխան քանակներով, կատարել նշված միավորի գնով: Վերոհիշյալին ի պատասխան՝ գնահատող հանձնաժողովը հայտնել է, որ պայմանագիրը կնքելու է նոմինալ՝ միավորի գնով, իսկ այնուհետև համապատասխան քանակի պոմպերի վերանորոգման պատվերի դեպքում կվճարի յուրաքանչյուր պոմպի համար նախատեսված միավորի գինը:

Նշվածի դեմ «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն առարկել է և հայտնել, որ պայմանագիրը կնքվում է ընդհանուր գնով, այլ ոչ թե միավորի գնով, որը չի կարող է բազմապատկվել համապատասխան պատվերների քանակով:

Նիստի ժամանակ «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն գնահատող հանձնաժողովին հայտնել է, որ սպասում է համապատասխան արձանագրություններին, որպեզի ներկայացնի բողոք:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն կարևոր հանգամանքի վրա, որ տվյալ ընթացակարգով ոչ մի արձանագրություն այդպես էլ չի հրապարակվել www.gnumner.am կայքում:

Այնուհետև ծանոթանալով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությանը, «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն հայտնաբերել է, որ իր բանակցությունների արդյունքում նվազեցված գները և որոշմամբ ամրագրված գները չեն համապատասխանում միմյանց:

Մասնավորապես, իր ներկայացրած ընդհանուր գները գնահատող հանձնաժողովի կողմից կամայականորեն բաժանվել են պոմպերի պահանջված քանակի վրա՝

համապատասխանաբար 4, 8, 7, ստացվել են միավորի գներ, և նշված միավորի գները արտացոլվել են պայմանագիր կնքելու որոշման մեջ:

Այլ կերպ ասած, ընդհանուր գին ներկայացրած մասնակցի գինը և պայմանագիր կնքելու մասին որոշմամբ ամրագրված գները չեն համապատասխանել միմյանց:

Վերոհիշյալը «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ի մոտ հիմնավորել է այն կասկածը, որ գնահատող հանձնաժողովը փորձում է միավորի գին ներկայացրած ՍՊԸ-ների հետ պայմանագիրը կնքել միավորի գնով՝ համապատասխանաբար պատվերի դեպքում բազմապատկելով միավորի գինը համապատասխան պատվերների քանակի:

«Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ն 09.03.2021թ.-ին բողոք է ներկայացրել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին և խնդրել.

1. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին բանակցությունների արդյունքում նվազեցված գնային առաջարկները դիտարկել որպես պայմանագրի ընդհանուր գին:

4. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգով հաղթող մասնակցի(ների) հետ պայմանագիրը կնքել մասնակցի(ների) առաջարկված գնային առաջարկի հիման վրա ներկայացված գնային առաջարկը դիտարկելով որպես պայմանագրի ընդհանուր, այլ ոչ թե միավորի գին:

«Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ն 09.03.2021թ.-ի ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 բողոքի քննության շրջանակներում Պատվիրատուն 11.03.2021թ.-ին թիվ 01-03/92-21 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը (շարադրված է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 որոշման մեջ, կցվում է).

«Ի պատասխան 09 մարտի 2021թ. Ձեր գրության՝ «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ, հայտնում եմ, որ 2021թ. փետրվարի 1-ին «էջմիածին ջրօգտագործողների ընկերության» (այսուհետ՝ Ընկերություն) կողմից պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, գնանշման հարցման ձևով, կազմակերպվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգ՝ երեք չափաբաժիններով:

Հրավերին կից ներկայացված թերությունների ակտով հստակ սահմանված է եղել Ընկերության հաշվեկշռում առկա յուրաքանչյուր տեսակի պոմպերի ընդհանուր քանակները, և նշված են եղել յուրաքանչյուր հնարավոր դետալների և մասերի փոխարինումը մեկ պոմպի համար, իսկ մասնակիցների կողմից գնային առաջարկները

պետք է ներկայացվեին յուրաքանչյուր պոմպի սահմանված հնարավոր դետալների և մասերի փոխարինման համար, այլ մեր կարծիքով յուրաքանչյուր տեսակի ընդհանուր պոմպերի դետալների և մասերի համար: Նման պահանջ սահմանվել է ելնելով այն հանգամանքից, որ Ընկերությունը հստակ չէր կարող սահմանել, թե տարվա ընթացքում որ պոպմի որ հնարավոր դետալը կամ մասը կորող էր խափանվել և փոխարինվել, այսինքն գնման առարկայի նպատակը հստակ է սահմանված եղել, իսկ հաղթող մասնակցի(ների) հետ պայմանագիրը կնքվելու է բյուջեով սահմանված առավելագույն թվով, որպեսզի սահմանված ժամկետում ըստ Ընկերության կողմից ներկայացված պատվերների իրականացվի յուրաքանչյուր մասի կամ դետալի փոխարինումը նորով (ինչպես օրինակ կազմակերպվում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման գնման ընթացակարգերը):

Միաժամանակ հայտնում ենք, որ բողոք ներկայացրած մասնակից «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն (այսուհետ՝ Մասնակից) փոփոխել է հրավերին կից ներկայացված թերությունների ակտով սահմանված ձևաչափը, ընդհանուր գին սյունակաում ավելացրել է տվյալ չափաբաժնի պոմպերի ընդհանուր քանակը և ներկայացրել է գնային առաջարկը ընդհանուր պոմպերի հնարավոր բոլոր մասերի և դետալների փոխարինման համար, սակայն հաշվի առնելով որ ընթացակարգը կազմակերպված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, որի համաձայն հայտ ներկայացրած բոլոր մասնակիցները միաժամանակ հրավիրվելու էին գների նվազեցման շուրջ վարվող բանակցություններին Մասնակցի կողմից ներկայացված հայտը չի մերժվել:

Միաժամանակ կարծում ենք, որ գնումներ անցկացնող կազմակերպությունը տիրապետում է ՀՀ գնումների մասին օրենքին և վերը նշված գործընթացը իրականացվել է՝ չշրջանցելով ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջները:»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 08.04.2021թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-LO-2021/14 որոշմամբ բավարարել է «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի 09.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը և «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցրել է բանակցությունների արդյունքում նվազեցված գնային առաջարկները դիտարկել որպես պայմանագրի ընդհանուր գին, իսկ պայմանագիր կնքելու դեպքում ներկայացված գնային առաջարկը դիտարկել որպես պայմանագրի ընդհանուր գումար:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 08.04.2021թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-LO-2021/14 որոշմամբ արձանագրել է, որ Ընթացակարգի հրավերով Պատվիրատուն չի

սահմանել, որ մասնակիցները գնային առաջարկով պետք է ներկայացնեին միավորի գներ: Ավելին, Հրավերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարել փաստել, որ այն չի պարունակում Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանված իրավակարգավորումը, այն է՝ հրավերով սահմանվում է նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով այդ առավելագույն գների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է,

2) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է,

3) ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է,

4) Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է,

5) Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Վերոնշյալ դրույթի՝ Հրավերում առկայության պայմաններում միայն հնարավոր կլիներ փաստել, որ պայմանագիրը պետք է կնքվի առավելագույն գումարով, ինչպես իր դիրքորոշմամբ հայտնել է Պատվիրատուն:

Ուստի այն դեպքերում, երբ Հրավերում առկա չէ Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետ ենթակետով սահմանված իրավակարգավորումը, ապա հաղթող ճանաչված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու դեպքում, այն պետք կնքվի վերջինիս առաջարկած ընդհանուր գումարով:

Ի կատարումն գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.04.2021թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 որոշման՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտնել է «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին, որ ՍՊԸ-ի ներկայացված գնային առաջարկը պետք է դիտարկի որպես պայմանագրի ընդհանուր գին և օրենքով սահմանված կարգով ՍՊԸ-ին ուղարկել է պայմանագրի նախագիծը՝ այն հաստատելու համար:

Այնուհետև՝ «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված համապատասխան գրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ ընտրված մասնակից «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին անգործության ժամկետի

ավարտից հետո պատշաճ ձևով ծանուցվել և առաջարկվել է կնքել համապատասխան պայմանագիր, սակայն վերջինս օրենքով սահմանված ժամկետում իր կողմից հաստատված պայմանագիր չի ներկայացրել Ընկերությանը:

- *Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, հրավերով սահմանվում է նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով այդ առավելագույն գների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է,

2) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է,

3) ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է,

4) Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է,

5) Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Ինչպես արդեն հայտնել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, իր տրամաբանությամբ, Ընթացակարգի հրավերը կազմել է Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանված իրավակարգավորման տրամաբանությամբ, գնահատող հանձնաժողովը մասնակիցներին բացատրել է, որ պետք է ներկայացվի միավորի գին, քանի որ տարվա ընթացքում հնարավոր չէ կանխատեսել, թե քանի պոմպ պետք է վերանորոգվի, և գնահատող հանձնաժողովը ողջ ընթացակարգի ընթացքում գործել է այն տրամաբանությամբ, որ ներկայացված են միավորի գներ:

Դրա ապացույցն է այն հանգամանքի, որ հայտերը բացելուց հետո գնահատող հանձնաժողովը «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ին հայտնել է, որ պայմանագիրը կնքելու է նոմինալ՝ միավորի գնով, իսկ այնուհետև համապատասխան քանակի պոմպերի վերանորոգման պատվերի դեպքում կվճարի յուրաքանչյուր պոմպի համար նախատեսված միավորի գինը:

Նույն միտքը գնահատող հանձնաժողովի կողմից շարադրվել է թե արձանագրությունների, և թե պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության մեջ, որտեղ «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ի կողմից ներկայացրած ընդհանուր գները գնահատող հանձնաժողովի կողմից կամայականորեն բաժանվել են պոմպերի պահանջված քանակի վրա՝ համապատասխանաբար 4, 8, 7, ստացվել են միավորի գներ, և նշված միավորի գները արտացոլվել են պայմանագիր կնքելու որոշման մեջ:

Այլ կերպ ասած, ընդհանուր գին ներկայացրած մասնակցի գինը և պայմանագիր կնքելու մասին որոշմամբ ամրագրված գները չեն համապատասխանում միմյանց:

Վերոհիշյալի հետ կապված գնահատող հանձնաժողովը մասնակիցներին հայտնել է, որ հաղթողի հետ պայմանագիրը կնքվելու է միավորի գնով՝ համապատասխանաբար պատվերի դեպքում բազմապատկելով միավորի գինը համապատասխան պատվերների քանակի:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նույն պնդումները Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կատարել է նաև թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 բողոքի քննության ընթացքում, երբ գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ Պատվիրատուն հստակ չէր կարող սահմանել, թե տարվա ընթացքում քանի պոպմի վերանորոգում է նախատեսում, ուստի մասնակիցների կողմից գնային առաջարկները պետք է ներկայացվեին յուրաքանչյուր պոմպի սահմանված հնարավոր դետալների և մասերի փոխարինման համար:

Սակայն «Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից 09.03.2021թ.-ի ներկայացրած բողոքով պարզվել է, որ գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ: Եվ միայն բողոքի արդյունքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 08.04.2021թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 որոշմամբ է հիմնավորել, որ Հրավերը չի պարունակում Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանված իրավակարգավորումը, ուստի այն դեպքերում, երբ Հրավերում առկա չէ Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետ ենթակետով սահմանված իրավակարգավորումը, ապա հաղթող ճանաչված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու դեպքում, այն պետք կնքվի վերջինիս առաջարկած ընդհանուր գումարով:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, որը բացահայտվել է բացառապես Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.04.2021թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 որոշմամբ, «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն հայտնվել է անելանելի վիճակում, քանի որ ՍՊԸ-ն հանձնաժողովի բացատրության հիման վրա ներկայացրել էր միավորի գին, ողջ ընթացակարգը ընթացել է այն տրամաբանությամբ, որ մասնակիցները ներկայացնում են միավորի գներ, որոնք Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանված իրավակարգավորման համաձայն կբազմապատկվեն պատվերի քանակով, հայտերի գնահատումը տեղի է ունեցել հենց այս տրամաբանությամբ (երևում է Ընթացակարգի արձանագրություններից, կցվում են), և միայն թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 որոշման արդյունքում է գնահատող հանձնաժողովը «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին հայտնել, որ ՍՊԸ-ի կողմից առաջարկված միավորի գինը պետք է դիտարկվի որպես պայմանագրի ընդհանուր գին:

Փաստորեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունները, որոնք մանրակրկիտ շարադրված են թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 որոշմամբ, հանգեցրել են նրան, որ «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը այն պարզ պատճառով, որ հանձնաժողովի կողմից պահանջված միավորի գնով չէր կարող կատարել ողջ պայմանագիրը:

Հարգելի պարոն Ներսիսյան, խնդրում ենք «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված խախտման փաստը քննելիս՝ նկատի ունենալ, որ պայմանագրի չկնքելը պայմանավորված է եղել բացառապես Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թույլ տված խախտումներով և բացթողումներով, թերի հրավերի կազմամբ և հայտերի սխալ գնահատմամբ, ինչը փաստացիորեն բացասական հետևանքներ է առաջացրել

բացառապես «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ի համար, քանի որ վերջինս հայտնվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու վտանգի առջև՝ իրենից անկախ հանգամանքներով պայմանավորված:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Կից ներկայացվում է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 08.04.2021թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 որոշման և «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համապատասխան արձանագրությունների պատճեները»:

Ընկերությունը 24.06.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ներկայացված միջնորդությամբ հայտնել է հետևյալը. «Ձեր վարույթում է քննվում «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2021/146 ընթացակարգը:

Սույն ընթացակարգով որոշման հրապարակման նիստ է նշանակվել 25.06.2021թ.:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 24.06.2021թ. «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ի կողմից Ձեզ ներկայացվել է ծավալուն դիրքորոշում ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2021/146 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ, ուստի խնդրում ենք՝ 25.06.2021թ. նիստի ժամանակ մինչև որոշման հրապարակումը հնարավորություն ընձեռնել «ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺ» ՍՊԸ-ին բանավոր ներկայացնել իր դիրքորոշումը, անհրաժեշտության դեպքում ներկայացնել լրացուցիչ փաստարկներ և ապացույցներ, ինչպես նաև պատասխանել Ձեր հարցերին»:

«Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/146 ընթացակարգի շրջանակներում 08.06.2021թ. ժամը 09:50-ին և 25.06.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 25.06.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստին ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էջմիածին» ջրօգտագործողների ընկերությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.05.2021թ. թիվ 01-03/276-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կարիքների համար 2021 թվականի փետրվարի 1-ին պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգ: Ընթացակարգին ընտրված մասնակից ճանաչված «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն անգործության ժամկետի ավարտից հետո պատշաճ ձևով ծանուցվել է կնքել համապատասխան պայմանագիր, սակայն վերջինս օրենքով սահմանված ժամկետում իր կողմից հաստատված պայմանագիր չի ներկայացրել Ընկերությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Կարգի 45-րդ կետը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ձեզ ենք ներկայացնում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների և «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի լուսապատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/146 ընթացակարգի շրջանակներում 08.06.2021թ. ժամը 09:50-ին և 25.06.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/146 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/146 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից իր կարիքների համար պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 10.05.2021թ. ծանուցել է «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2021թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10.05.2021թ. առաջարկվել է կնքել պայմանագիր, սակայն օրենքով սահմանված ժամկետում (10 աշխատանքային օր) վերջինիս կողմից չի ներկայացվել իր կողմից հաստատված պայմանագիրը, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերությանը պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.06.2021թ. թիվ 26/26-1/8859-2021 գրությունը, «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության 27.05.2021թ. թիվ 01-03/276-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի***

ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված

փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:</u>***

Այսպես, «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից իր կարիքների համար պոմպերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ***<u>10.05.2021թ.</u> ծանուցել է «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***<u>25.05.2021թ.</u>*** նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10.05.2021թ. առաջարկվել է կնքել պայմանագիր, ***սակայն օրենքով սահմանված ժամկետում*** (10 աշխատանքային օր) ***վերջինիս կողմից չի ներկայացվել իր կողմից հաստատված պայմանագիրը, և <u>Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերությանը պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ:</u>***

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u>*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսինքն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում են հստակ ժամկետներ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը՝ դրանք համադրելով գործում առկա փաստական հանգամանքների հետ, գտնում եմ, որ «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն

ըստ էության հրաժարվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և թույլ տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ Ընկերությունը Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել Պատվիրատուին:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Անդրադառնալով Ընկերության կողմից սույն ընթացակարգի քննության շրջանակներում վկայակոչված մասնավորապես հետևյալ դիտարկմանը. «*Ողջ ընթացակարգը ընթացել է այն տրամաբանությամբ, որ մասնակիցները ներկայացնում են միավորի գներ, որոնք Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանված իրավակարգավորման համաձայն կբազմապատկվեն պատվերի քանակով, հայտերի գնահատումը տեղի է ունեցել հենց այս տրամաբանությամբ (երևում է Ընթացակարգի արձանագրություններից), և միայն թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 որոշման արդյունքում է գնահատող հանձնաժողովը «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին հայտնել, որ ՍՊԸ-ի կողմից առաջարկված միավորի գինը պետք է դիտարկվի որպես պայմանագրի ընդհանուր գին, որով պայմանավորված «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն հայտնվել է անելանելի վիճակում և արդյունքում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, քանի որ* ***<u>Ընկերությունը հանձնաժողովի բացատրության հիման վրա ներկայացրել էր միավորի գին և միավորի գնով չէր կարող կատարել ողջ պայմանագիրը</u>***», հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում***

հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.1-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:***

Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 5-րդ կետի 5.3-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա ***գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով***:

Ընթացակարգի հրավերի հավելված 2-ը՝ գնային առաջարկը սահմանվել հետևյալ տեսքով՝

Հավելված 2

ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05 ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-21/05 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ***ընդհանուր գներով***.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			

_____ _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ընթացակարգի հրավերի պահանջ է եղել, որպեսզի գնային առաջարկը ներկայացվի մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, ուստի

Ընկերության կողմից դիրքորոշմամբ վկայակոչված պնդումները, որ «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ն հայտնվել է անելանելի վիճակում և արդյունքում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, քանի որ Ընկերությունը հանձնաժողովի բացատրության հիման վրա ներկայացրել է միավորի գին և միավորի գնով չէր կարող կատարել ողջ պայմանագիրը անհիմն են, քանի որ հայտը ներկայացվում և գնահատվում է ոչ թե ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացատրության հիման վրա, այլ հրավերով սահմանված կարգով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից վկայակոչված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի կողմից 08.04.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 իրավապարտադիր որոշմանը, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ վերը նշված իրավապարտադիր որոշմամբ ևս արձանագրվել է, որ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերով չի սահմանել, որ մասնակիցները գնային առաջարկով պետք է ներկայացնեն միավորի գին, միաժամանակ արձանագրվել է, որ առկա չէ Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանված իրավակարգավորումը, ապա հաղթող ճանաչված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու դեպքում, այն պետք է կնքվի վերջինիս առաջարկած ընդհանուր գումարով և արդյունքում որոշմամբ պարտավորեցվել է Պատվիրատուին բանակցությունների արդյունքում նվազեցված գնային առաջարկները դիտարկել որպես պայմանագրի ընդհանուր գին, իսկ պայմանագիր կնքելու դեպքում ներկայացված գնային առաջարկը դիտարկել որպես պայմանագրի ընդհանուր գին:

Այսպիսով՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.06.2021թ. թիվ 26/26-1/8859-2021 գրությամբ «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էլեկտրոշարժ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**